

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Դրութիւնը առաջւաց պէս խառնակ է: Երկու երկիրներում սպա սւում են պարլամենտների լուծումներ՝ ֆրանսիայում և Գերմանիայում: Գերմանական զինւորական նոր օրինագիծը, որի մասին մենք հաղորդել էինք «Մուրճ»-ի անցեալ 1892 թ. № 10-ում, ներկայ փեարւար ամսին մերժւեց գերմանական ռայխստագից: Մենք այդ սպասում էինք, կշռելով ռայխստագի կուսակցութիւնների արամադրութիւնները և ներկայ կառավարութեան հեղինակութիւնը: Մեր այդ մասին յօդւածը հինգ ամիս առաջ վերջացրինք այսպէս՝ «Արդէն սպասում է, որ ռայխստագի կը մերժի կառավարութեան այդ օրինագիծը. և զրա հետեւանքը կը լինի ռայխստագի լուծումը»: Այժմ կարող ենք ասել, որ օրինագիծը մերժւեց արդէն և որ սպասում է ռայխստագի լուծումը:

Աւելի մսիթարական չէ ֆրանսիայի ներքին դրութիւնը: Պահամացի սկանդալի միջոցին կազմւած Ռիբօի մինիստրութիւնը (տես «Մուրճ» 1892, № 1) կարճառև տեսողութիւն ունեցաւ, և այժմ (նոր տոմարով մարտի վերջը) հանրապետութեան նախագահ Կարնօն յանձնել է նոր մինիստրութեան կազմելլ՝ Մելինին, որը յացանի է որպէս ագրարական (հողային) զօրեղ կուսակցութեան պարագլուխ և գլխաւոր հեղինակ ներկայում իշխող ֆրանսիական տնտեսական հովանաւորող քաղաքականութեան: Այդ չաջողելով Կարնօն այժմ դիմել է Ռիւպիւզիին Ռիբօի մինիստրութիւնը ինքը հրաժարական տւեց, օգտուելով միջնդհարումից, որ պատահեց պատգամաւորների ժողովի և Սենատի միջև, խմբչքների մասին օրինագծի առիթով:

Որպէս Գերմանիայում, նոյնպէս և ֆրանսիայում սպասում է պարլամենտի լուծումը, որպէս զի ազդը, նոր ընտրութիւններով,

աւելի որոշ կերպով արտայացուի կառավարութեան քաղաքականութեան վերաբերմամբ:

Անցեալ տեսութեան մէջ մենք յայտնեցինք արդէն որ Գլադուսնը ներկայացրեց իւր իրլանգական ինքնավարութեան օրինագիծը: Խնդրի քննութիւնը պարլամենտում յետաձգւած է Զատկի արձակուրդներից յետոց: Մեծամասնութիւնը յօդուա օրինագծի կարելի է ապահոված համարել, և հազիր թէ Սօլարրիի ադիտացիան ընդդէմ օրինագծի՝ որ և է փոփոխութիւն կարողանաց մոցնել հաստատւած կարծիքի մէջ:

Մի նշանաւոր պետական անձն անյացտացաւ: Ժիւլ Ֆերրին վախճանեց ներկայ մարտ ամսին: Ֆրանսիական այժմեան երրորդ հանրապետութեան սիւներից մէկն նա: Ֆիերից և Գամբետացից յետոց Ֆերրին կարեռադոցն դործին էր ֆրանսիական պետական անձերի մէջ:

Այս վերջին 5—6 տարիներս նորա ազգակիցները նորան դատապարտել էին չեզօքութեան քաղաքական ասպարէզում: Նորա թրշնամիներն էին՝ արմատականները, որոնք կատարելաւուս յաջողեցին նորան վերջին ծայր անժողովրդական դարձնել, մինչեւ որ անցեալ տարի սենատոր ընտրւելուց յետոց, ներկայ վետրւարին, իւր մահից քանի միշտաբ առաջ, Սենատը նորան իւր նախագահ ընտրեց, մի ընտրութիւն, որ քաղաքական կարեռ անցքի նշանակութիւն ստացաւ:

Ժիւլ Ֆերրին յայտնի է զլիսաւորապէս որպէս զլիսաւոր հեղինակ այն օրէնքների, որոնցով Ֆրանսիայում մոցւեց պարտաւորի: ասրբական ուսում, դպրոցները աշխարհականացան, Ֆրանսիայից դուրս քշւեցին եզուիաները և բոլոր արգելւած կրօնական միաբանութիւնները, համալսարանների բեֆորմը կատարւեց: Ֆերրիի քաղաքականութեանն է պարտական Ֆրանսիան Տունիսի և Տոնկինի նւաճումների համար: Բայց Տոնկինի մէջ կրած պատերազմական մի քանի անաջողութիւնները և այդ դործի թանկ նստացնելը առիթ տւին Ֆերրիի դէմ հասարակաց կարծիքը յուղելու, օգտելով նաև նրանից, որ Ֆերրին ձգտում էր Գերմանիայի հետ բարեկամութիւն հաստատել:

Z.